

Թերթը կը գրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅՆԵՐԻՆ

Ի Պոլսկարիա  
Տարեկ. 10 ֆր.

Վեցամս. 5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

Վեցամս. 6 "

Ամերիկա

2 Տոլ. 30 սենդ


ԿԱՆԽԻԿ

ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ  
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN  
PAPAZIAN  
YILDIZ TABIA  
VARNA  
BULGARIE



ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

2. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 6 ՇԱՐԱ 1902

ԹԻԻ 255

## ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ ՆՈՒԷՐ

ՀԱՅԵԼԻԻ բաժնեգիրները օրը օրին կանխիկ վճարող բաժանորդները՝ այսուհետեւ ահէն երեք ամիսը անգամ մը ծիծաղաշարժ կատակերգութիւններու մէջմէկ տետր պիտի ստանան:

Ներկայ շրջանի տուալին տետրը որ տպագրուելու վրայ է, Յուլիս 15ին պիտի յանձնենք: Հարկ է ըսել որ, թէ ժամանակին չը վճարող և թէ՛ ձեռքէ թերթ առնողները չպիտի կրնան մասնակցիլ սոյն նուէրին: Իսկ բացէն՝ ձեռքէ առնելու պիտի տրուին 50 օտնգիլ:

անոնց գաղափարները առնելու համար, Մենք ալ մեր ընթերցողները սոյն շահեկան խնդրէն տեղեակ ընելու նպատակաւ արժանի կը համարինք սոյն թերթի խմբագրականին հետեւեալ մասերը արտահայել:

«Նշանաւոր անձանց գրկուած նամակներուն մէջ, նախ՝ չեշտուած էր հայ ժողովուրդին ազգային զօրաւոր զգացումը, բան մը բնելու համար անոնց մէջ՝ օրը օրին աճող անյուսութիւնը, թուրք կառավարութեան մէջ ներկայիս տիրող իրաց կացութեան ծանրութիւնը, և ներկայ գառն պայմաններուն ներքեւ քաղաքագէտներէ և գործի մարդերէ ներշնչուած իմաստուն և համակրելի խորհուրդներու մասին զգացում մեծ պէտքը, և ապա սու հետեւեալ հարցումները անոնց ներկայացնելով՝ խնդրուած էր անոնց մասին յայտնել իրենց գաղափարները:

1. Պէտք է որ Հայեր (որ թէպէտ թիւով քիչ, սակայն անտեսապէս և իմացականապէս թուրքիայի թիկունքն են) իրենց հայրենիքին քաղաքական շահերու մասին անտարբեր կենան:

2. Սուլթանի Հայերը ճնշելու օրոշումը ազգի առջև ունենալով հանդերձ՝ յեղափոխական շարժումը ինչ աստիճանով կրնայ հայ փաստին կենդանի մնալուն նպաստել, մինչև որ եւրոպան մշխամտէ:

3. Եթէ, ըստ ձեր կարծեաց, Ռուսիան կարճ ժամանակէն Սև ծովի շրջակայքը և Հայաստանը պիտի գրաւէ, Հայերու համար լուսագոյն կերպը

## ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԴԻՆԵՐՈՒ ՀԱՌԱՔՈՒՄ ՄԸ

Ամերիկայի հայաթերթերէն ԿՈՉՆԱԿԻ խմբագրութիւնը ուղերով Հայկական խնդրոյ մասին կարծիքներու հաւաքում մը առաջ բերել: Վերջերս կարգ մը Ամերիկացի և Հայնշանաւոր անձնաւորութեանց մասնաւոր նամակներ զրկեր է



պիտի ըլլա՞յ զօրացնել իրենց գիրքը Հայաստանի մէջ (որուն մէկ մասը արդէն Ռուսիայի ձեռքըն է) և Ձարի գրատու մը փութացնելու աշխատի :

4. Սակայն եթէ կը հաւատաք թէ Հայաստանի Ռուսական գրաւումը տարակուսելի խընդիր մ'է, այն ատեն, արդեօք Հայերը պիտի կրնան բան մը շահիլ, եթէ իրենց գործունէութիւնը նուիրեն պաշտպանելու Թուրքիայի ամբողջութիւնը :

ա. Եւ որպէս զի հասնին այս վախճանին, արդեօք, մուշակով իրենց կրած բոլոր զրկանքներ, հաւատարմութեամբ նպաստելո՞ւ են ներկայ համիտեան ըէժիմին, թէ :

բ. Միանալով Երիտասարդ Թուրքերուն (Օսմանցի Ազատականներուն) շանալու են տապալել Սուլթան Համիտի կառավարութիւնը և անոր տեղը հաստատել սահմանադրական միապետութիւն մը :

5. Եթէ համոզուած էք, սակայն, թէ այս թելադրուած քաղաքականութիւններէն ոչ մին կրնայ ծառայել Հայաստանի քաղաքական ապագային կենսական խնդիրը լուծելու, դուք ի՞նչ որոշ քաղաքականութիւն պիտի թելադրէք, որ մեր հայ հայրենասէրներ որդեգրեն պաշտպանելու իրենց տունը, պատիւը և երկիրը :

Այս նամակները միայն անոնց զրկուեցան, որ թրքական գործերու և մասնաւորապէս Հայկական Խնդրի մասին տեղեակ ըլլալու գիրքին մէջ կը գտնուէին : Մասնաւոր ջանք մը ի գործ դրուեցաւ, որ կարելի ըլլար հաւաքել կարծիքներու զանազանութիւն այնպիսի մարդոցմէ, որոնք ուրիշ խնդիրներու մէջ տրամադմաբար հակառակ գիրքի մէջ կը գտնուէին :

Ուրախ ենք ըսելու, թէ ընդունած ենք կարգ մը շահեկան պատասխաններ և տակաւին ուրիշներ ալ կ'ակնկալենք : Ոմանք պատասխանեցին թէ այդպիսի փափուկ հարցումներու, որոնց պատասխաններն կրնան ծանր հետեւանքներ ունենալ, պատասխանելու ինքզինքնին ձեռնհաս չէին գտնուիր : Անոնցմէ մէկը, որուն անունը այսօր քաղաքակիրթ աշխարհի մէջ ուժ մը կը ներկայացունէ, իրեն ուղղուած այս հարցումներէն յայտնապէս զգացուած՝ մեզի խմացուց թէ որոշած է անմիջապէս խնդիրը ուսանելու սկսիլ եւ

իր եզրակացութիւնները հաշորդել : Ընդունած ենք այլ եւ այլ անձերէ նաեւ պատասխաններ, որոնք իրենց կարծիքները յայտնելէ վերջ խնդրած են որ հրատարակութեան չորուն անոնք :

ԿՈՉՆԱԿԻ յաջորդ քանի մը թիւերուն մէջ ամէն շաբաթ այս պատասխաններէն մէկ կամ երկու պիտի հրատարակուին : (\*)

Կարեւոր է յաւելուլ, թէ նամակները պիտի հրատարակուին իբրեւ կարծիքներ, անհատներու, որոնց մասին խմբագրական մարմինը ինքզինք պատասխանատու չհամարիր : Որքան կարելի է, նամակագիրներու անուններ իրենց նամակին հետ մէկտեղ պիտի հրատարակուին, ի բաց առեալ անոնցը, որ քաղաքական և կամ անձնական պատճառներով թոյլատրուած չեն, և համառօտ բացատրութիւններ պիտի տրուին յոյց տալու նամակագրին գիրքը իբրեւ հեղինակաւոր մը քննութեան առարկայ եղած ներկայ հարցերուն :

Կը յուսանք մեր այս ձեռնարկը պիտի ծառայէ ազգին լուրջ և կնճառ հարցին վրայ աւելի լոյս սփռելու և անոր արդիւնքը պիտի ըլլայ, 1) (թէ անոնք՝ որ սովորած են խնդրին վերայ միայն մէկ կողմէն նայիլ, պիտի համոզուին անոր ամէն կողմերը ուշադրութեան առնելով՝ զայն առանց նախապաշարութիւն քննել, 2) (թէ անոնք՝ որ մինչև հիմա ամբողջովին անտարբեր գտնուած էին մեր ազգային խնդրին մեծութեան և կարեւորութեան, որ ուրիշ բան ըսել չէ, եթէ ոչ մեր ժողովուրդին իբրեւ քրիստոնեայ ազգ մը պահպանուիլն ու յառաջդիմելը, անոնք ալ պիտի դարձնուին հարազատ շահագրգռութիւնով մը և սկսին անհատական ջանքեր ընել, և 3) այս կենսական խնդրին վրայ կատարուած այսպիսի հրապարակային ուսումնասիրութիւն մը պատճառ պիտի ըլլայ որ բոլոր անկեղծ հայրենասէրներ մէկտեղ գան և պարտականութեան աւելի յստակ ըմբռնումով անձնուիրաբար տան ինքզինքնին իրենց հայրենասիրական պարտքը կատարելու համար ներդաշնակ գործակցութիւն մը կազմելու :

(\*) Կը խոստանանք զանոնք ալ արտատպել : Ծ. Խ. 2.

— Պարսկաստանցի Երիտասարդ հայ գործադանատէր մը՝ Կ. Աւետեան իր ամուսնութեան առթիւ 30.000 լուպի նուիրեր է, իր կնոջ անունով ազջկանց վարժարան մը բանալու : Այս դպրոցը պիտի բացուի թէհրանի մէջ, ուր վերջերս հայ հասարակութիւնը դպրոցի համար չէնք մը կառուցած էր : Պ. Աւետեան յանձն առեր է



1500 ընդհանուր փճարի տարեկան, իբր գրամագլուխ տոկոսին, 600 ընդհանուր ալ նուիրեր է գապական առարկաներու գնման և գրադարանի հաստատութեան համար: Այլ կան հայրն ալ Պ. Գաբրիէլ Թարասեան խոստացեր է ինքն ալ նոր վարժարան մը բանալ իր կողմէ և նուիրեր է 300 ընդհանուր հաստատութեան գալոցին պէտքերուն համար:

— Բժշկապետ Ա. Բաբեանցի հեղինակութեամբ էջմիածնի տպարանէն լոյս տեսած է — «Համառօտ խրատներ թէ ինչպէ՞ս պէտք է պաշտպանուիլ թուրքախից» անուն շրջաբերական մը որ ուսուսհայ եկեղեցիներուն բակը պիտի կախուի:

### ԱՂԶԱՅՆՅ ԿՐԹԱՐԱՆ

ՎԱՌՆԱ

Այլ կանց կրթարանի ամսվերջի հրապարակային հարցաքննութիւնը տեղի պիտի ունենան Յուլիս 9 երեքշաբթի օրէն սկսեալ մինչև Յուլիս 15 երկուշաբթի: Ծնողք եւ պաշտպանք կը հրաւիրուին ներկայ գտնուիլ հարցաքննութեանց:

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— ԶԵՄԵՐ —

Պուլկար կառավարութիւնը 174 հազարէն 134 հազար ֆր. իջեցուցած է իր Պուլկար էքզարքարանին յատկացուցած տարեկան գումարը:

— Պատերազմական նախարարը Սօպրանիէին ներկայացուց ծրագիր մը տարեկան զօրահաւաքութիւնը երեք տարուան համար իբր փորձ հետեւեալ թիւերուն իջեցնելու: 13080 հետեւակ զօրքի իսկ 5000 հօգի ուրիշ զօրքերու համար: Արձակուածները տարեկան 40 ֆր. տուրք մը պիտի տան:

— Նախարարութիւնն ալ յուլիս 13ին Սօպրանիէին ներկայացուց ծրագիր մը որ զօրահաւաքութեան զեղչ մը կը տրամադրէր: Այդ զօրքերը մինչև այժմ 45000 էին, ասկէց վերջ 40 հազար պիտի ըլլան:

Լոնտոն. — Լորտ Սալզպուրի հրաժարական տուաւ: Գանձային նախարար Լորտ Արթըր Պալֆուր անոր յաջորդեց: Անգլիոյ նոր վարչապետը Սալզպուրիի քննարկին է:



### ՕՐՈՒԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

— 0 —

Ի ՄԱՆԹԱՐԷ ԹՆԴԱՆՈՒ

ԵՒ

Ի «ՈՐ ՄԵՆՔ ՀԵՐՈՍ» Է ՎԱՌՈՒ

Երբ «որ մենք հերոսը առաջին անգամ հարցաքննիչ դատաւորին ներկայացուեր է, ըստ օրինի իրեն ուղղուած «անունդ ինչ է» հարցման քաջարար սապէս պատասխաներ է:

— Աղատութիւն կամ մահ:

Բոժ. — Պո՛ւմ:

Երբ «որ մենք հերոսը ընդհ. գատախաղին ներկայացուեր է, ամենայն անխուսովութեամբ ոտքը ոտքին վրայ դրած նստեր ձխեր է:

Բոժ. — Պա՛մ, պո՛ւմ:

Երբ «որ մենք հերոսը» բանտէն արձակուելու առնելու ըստ սովորութեան, այնուհետեւ Սուլթանին հաւատարիմ գտնուիլ երգմնելու համար Պէրսութի եկեղեցին տարուեր է, հոն զինքը մըտիկ ընող խաճիչներուն ու ստիկաններուն առջեւ «հաւատարիմ ՁԸ գտնուելու համար կերպնում» ըսեր ու արձակուեր է:

Բոժ. — Պո՛ւմ, պա՛մ, պո՛ւմ, կը՛ռ:

Երբ բոլոր բանտարկելոց նման «որ մենք հերոսը» ալ կենդանագիրը քաշել ուզեր են, «որ մենք հերոսը» չի ճանչցուելու համար ստիկանի կերպով դէմքը ալակերպեր է, և պատկերը քաշող բարի-ժաղիկ (պուրնու գուլաղը քէսիկ) ստիկան հարկւրապետն ալ այդ ալակերպութիւնը կլլեր է:

Բոժ. — Պո՛ւմ, պո՛ւմ:

Վերջապէս, զո՞րն առնելու կամ զո՞րն խոստովանիլը, զի անթիւ են մանթարաբանութիւնք «որ մենք հերոսը», ամիսփեալ 421 երեսէ բաղկացած տետրակին, և զորս ուզեր է կլլեցնել Գերմանացի միսիօնարին, անշուշտ տիրանալու համար անոր հարկւրաւոր կամ հազարաւոր (ալաբաղնա) կարմուկ ֆրանքներին, սրտնցմէ 200 հատը ստացած է եղեր բէշին, ձեռամբ ծիար պատուելի Ա. ին:

Բոժ. — Ան հասեր է իր մուրատին, դուք ալ հասնիք ձեր մուրատին: ամէն:



## ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ԱՌ ՕՐ . Մ . . .

Այդ ֆու վարդագոյն շրթերէն կաթող  
 Սկզբէն, գոյսրիկ խօսքեր քրքումն,  
 Ինչպէս գարնանի ծաղկին համար ցօղ  
 Ինձ շնչէն հոգի, սէր եւ յոյս անհուն:

Բայց երբ ֆու նայումս կապոյս աշուղդ աշդ  
 Ինձ բռնէ մաղմոս, կորցի ինձ հրճումս  
 Ձգեալ յէտին դառնութիւն մանկայս,  
 Սարսուռ մը մահումս, յուսահատ մի կեանք:

Եթէ բառ մը լոկ ինձ հոգի կուտայ,  
 Էր աշպէս երբեմն սիրս յոյսս  
 Սկզբ, դառն գիւ աշխարհիս վրայ,  
 Ես անհուն սիրով դարձեալ սիրելի եղ:


Բանի պղպաւ երկնքի սասողեր  
 Այդ անջրպէսի անհուն ծոցին մէջ  
 Բանի գարուն գայ եւ ծաղկին ծառեր  
 Լսուի թռչնիկին երգեր եղեւ:

Եւ թէ կը սուրայ զեփիսուն անուշիկ  
 Երբոր ման կուգաւ մէջը պարտեզիս  
 Վարդի մը կոկոն տեսնեմ զեղեցիկ  
 Ու ըսէ ինձի ճանկցար արդեօք գիւ:

Գիտցիր թէ իմ սիրս թոյլ դէպի ֆեղ  
 Երագէ ֆաղցրիկ . . . թէ մեռնիմ յայնժամ  
 Սեւ հողին ներքեւ ֆանի մնչեմ ես  
 Գոչէ սիրելի ֆեղ, իմին գերեզման:

ՄՈՒՐԱԾ

## ՃԱԲՈՆՑԻ ԿԻՆԸ



Երբոր մօտէն ուռումնասիրենք ու քննենք  
 Ճարտնցներու ամուսնական սովորութիւնները եւ  
 արարողութիւնները, պիտի տեսնենք որ շատ  
 հետաքրքրական եւ արտասովոր երեսօյթներ կան  
 հոն, իրենց տարօրինակ կերպերը, ծանօթու-  
 թիւնները եւ աւելորդ աշխարհութիւնները կնո-  
 ջական խնդիրներու մասին, բոլորովին ներհան-  
 են անգլխական համարձակ ընկերութեան մէջ  
 գտնուածներուն:

Ամբողջ ճարտնի մէջ չիկայ մայր մը որ ու-  
 զէ ամուսնացնել իր աղջիկը, այնպիսի երիտա-  
 տարի մը հետ որ պատրաստ տուն մը չունի  
 զայն ընդունելու. համար, ինչ պարագայի մէջ  
 ալ որ գտնուին, նոյն իսկ իրարու հետ սիրա-  
 հարուած ալ ըլլան, նորէն օգուտ չունի:

Նաեւ ճարտնահին բնաւ իրաւունք չունի իր  
 ամուսինը ինք ընտրելու. այս բանը տեղի կու-  
 նենայ շահագէտ բարեկամներու միջոցաւ, զոր  
 սովոր, եւր միջնորդ կոչել: Աստիք սակայն ամէն  
 ջանք ի գործ կը գնեն իրենց ձեռքէն ելած բա-  
 րիքը ընելու աղջկան՝ որուն ճակատագիրը եւ ա-  
 պագան ունին իրենց ձեռքերուն մէջ:

Ամէն բանէ առաջ, ընտրութիւն փեսացուն  
 պէտք է խելացի ըլլայ, նաեւ աղէկ անցեալ ու-  
 նեցող գերդաստանէ սերած: Իր ընտանիքին  
 հնութեան թուականը սրճափ հեռաները եր-  
 թայ, այնքան աւելի կը յարգուի: Եթէ իր ըն-  
 տանիքին ու եւ մէկ ճիւղին մէջ յիմարութեան  
 ամենաթեթեւ հետք մը եղած ըլլայ, այն ատեն  
 իրեն համար աղուոր հարս չի կայ: Միջնորդնե-  
 րը իրեն չեն մօտենար:

Եթէ հարցնէք ճարտնցի մը թէ ամուսնա-  
 նայէն առաջ կը սիշէր իր կինը թէ ոչ, շատ  
 հաւանական է որ «ոչ» պիտի պատասխանէ. ու-  
 թովհետեւ ամուսնացած օրը միայն կը տեսնէ  
 զայն: Եւ որովհետեւ ճարտնցի հարսը շատ տա-  
 րօրինակ, անուշիկ եւ սիրուն է իր գեղեցիկ հա-  
 գուստին եւ ծաղիկներուն մէջ, ուստի վարմանա-  
 լի չէ երբ փեսան զայն տեսնելուն պէս սիրա-  
 հարուի անոր:

Բարեկամը, կամ միջնորդը, որ գործ մը  
 եփելու պաշտօնն ունի, երբեմն կը պատահի որ  
 աղջիկը մանչուն կը ցօյցնէ: Յաճախ ալ սակայն  
 միջնորդին ձախաւերութենէն, փոխանակ մանջը  
 իրեն համար սահմանուած աղջկան սիրահարուե-  
 լու, կընտրէ անոր բաղմաթիւ քոյրերէն մին,  
 բնականաբար գտնուողներուն ամենէն գեղեցի-  
 կը: Այն ատեն, ալ կարեւորութիւն չի տար  
 միջնորդին խղճներուն եւ ոչ ալ անոր բրած  
 ճարպիկ գովեստներուն իր մաապրած աղջիկը  
 առաջ քշելու համար: Եփուն միջնորդ մը, ճա-  
 րտնցի երիտասարդի մը չի ցօյցնէր միջին գե-  
 ղեցկութեան տէր աղջիկ մը, երբոր անիկա շր-  
 ջապատուած է գեղեցիկ քոյրերու խմբակէ մը:

Ընդհանրապէս, միջնորդը բարեկամ մըն է  
 թէ մանչուն եւ թէ աղջկան ծնողքին: Շատ դժ-  
 ուար գործ է խղճոտ երիտասարդներ իրարու  
 դէմ հանելը, շատ ողջմտութիւն եւ խմտու-  
 թիւն հարկ է, միջնորդն ալ երբեք յօսահատե-  
 լու չէ իր ձեռնարկը առաջ տանելէ:



Երբեմն կարգադրութիւն մը կընեն. աղջիկը իր մօրը հետ ժողովրդական ճաշարան մը կերթայ: Մանչն ալ միջնորդին հետ անոնց դռնուած սենեակին ճիշդ քովինը կերթայ. և իրարու հետ խօսած ժամանակին, միջնորդը իբր թէ յտնկարծ ընտանի ձայներ կը լսէ քովի սենեակէն: Ուստի կը հրէ շարժուն միջնորդը և պարմացական բացադանչութիւն մը կարձակէ:

— Օհ, հոս էն եղբւր Տ կին Օթոն և Օր. Օհաննան. թոյլ տուէք որ ձեզի ներկայացնեմ Պր. Աղանօն. ինչ գեղեցիկ հանդիպում, ինչ ազուարատեն կրնանք անցնել միասին:

Անշուշտ, սիրելի պզտիկ Օհաննան շատ հաճոյք կըգայ Պր. Աղանօն ներկայացուելու: Բայց խեղճը կը կարմրի, ջիղերը թունդ կեցնեն ինքզինքը կը ծածկէ իր մօրը երկայն քղանցքին ետև: Հաշիւ կը համարձակի Աղանօն նայելու, չը գիտէր թէ պիտի կարենայ զայն սիրել թէ ոչ: Ծառ անգամներ, գետինը խոնարհած ատեն, հողմհարովը երեսը կը ծածկէ: Միջնորդը դործի վրայ է, կերերայ, շարժումներ կընէ, չափազանց զբաղեալ է խօսակցութեամբ, երկու կողմերը կուզէ իրարու մտերմացնել: Իրենց պաշտօնական ներկայացումէն վերջ, երկուստարդուհին ուշադիր նայուածքներ կը գողնայ երկուստարդէն, զոր իրեն ընտրած են աւուսին:

Այն ատեն սպասուհիները ներս կը բերեն թէյը, և մայրը կառավարկէ աղջկան, որպէս զի հրամցնէ զայն: Հիմակ պէտք է որ աղջիկը ելլէ, թէյը լեցնէ, եւ պզտիկ գաւաթներով ամէնուն ալ տայ: Ծառ մեծ կարեւորութիւն ունի այս ըստ երեւութի պարզ երևցած արարողութիւնը կատարելու կերպը, որովհետեւ անով է որ պիտի ներգործէ գիւմայինին վրայ: Պէտք է թէյը լեցնէ չափով, ոչ աւելի պակաս, մանչր հոն է. կը գիտէ ամէն բան: Եթէ աղջիկը վարժ, նուրբ, սիրուն, ձեւեր ունի, ատենք կերեւան թէյի արարողութեան միջոցին, եթէ խեղճ աղջիկը ջլային և երկչոտ է. բնականաբար բոլորովին կտրէ այն լաւ տպաւորութիւնը զոր գործած էր:

Այս տեսութիւնը տեղի ունենալէ առաջ, երկու կողմի բարեկամներն ալ մանրամասն քննութիւններ կը կատարեն. Փեսացոյին ծնողքը կը հարցափորձեն երկուստարդ աղջկան գասատները, ձեւագլխոտ թեան ուսուցիչները, հասկընալու համար թէ աղջիկը ի՞նչ տաղանդ ունի, իր ծնողքին հետ ի՞նչպէս կը վարուի, ուրիշներու հետ վարուելու ճարտարութիւնը ունի՞, տանտիկնութիւնը ի՞նչպէս է, ծառաներու հրամայել գիտէ՞ և առկաւին շատ բաներ:

Ընտանիքին անցեալին եւ ազգաբանութեան վրայ նախապէս տեղեկութիւններ կաշնուի: Աղջկանը ծնողքն ալ լուրեր կառնու մանչուն առողջութեանը, ունեցածին չունեցածին անցեալին, նպատակներուն, տունին, դպրոցին, գաստիարակութեան, ընտանեկան դէպքին և իր ծնողքին հետ վարուելու կերպին վրայ: Ամէն բան խնամով կը քննադատուի:

Յետոյ տեղի կուսենայ այն տեսութիւնը, որով վրայ արգէն խօսուեցաւ. Սակաւն այս տեսութիւնը պարզապէս երկրորդական կարեւորութիւն ունի. կը պատահի որ աղջիկը, գեղեցիկ է, կըսէ փեսացոյին համար, նոյնպէս և այս վերջինն ալ աղջկան համար շատ նուրբ, ամչկոտ և սիրուն է կըսէ. նաև աղջկան մայրը անուշութեամբ կը ժպտի երկուքին ալ. որովհետեւ միջնորդին ճարգիկ լեզուն երկուքն ալ կը գովէ համահաւասարապէս. Այն ատեն ծնողաց բարութիւնը կը կայանայ երկու երկուստարդներու սիրալիր յարաբերութիւնները քաջալիքելուն մէջ. Բայց, եթէ մանչն ու աղջիկն իրար չը սիրեն, ալ ըլլան. պէտք է որ անմիջապէս սիրեն. որովհետեւ գիտեն թէ իրենց երկուքին ալ ծրնողքները ամէն ջանք ըրած են իրենց երջանկութիւնը ապահովելու համար. ուստի և կաւուսնան:

Եթէ երկուստարդ մը փողոցին կամ ծաղկահանգէսի մը մէջ սիրահարուի աղջկան մը, ինչ որ շատ հազուադէպ պարագայ մըն է, այն ատեն արտասովոր կերպով խիստ քննութիւններ կը կատարեն երկու կողմի ծնողքներն ալ:

Փեսացուն կը շինէ աղջկան օժիտը. Դրամական նուէր մը կը տէ հայրին ծնողքին որպէս զի անոր պէտք եղած հագուստները պատրաստեն. Փաթոյթներով մետաքսէ սպի (կերպաս) կը զրկէ. օպիւններ (գօտի) շինելու համար. կը զրկէ նաև նետադուտ խեցեմօրթ մը և չորցած ձուկ մը. որ շատ կը նմանի թիւնիկի. Բոլոր այս նուէրները խոսհրդանշաններ են. Օպին կը նշանակէ անհուն պայմանագրութիւն մը. բարոյականի մաքրութիւնը բնականական պատուոյ նըկատմամբ: Չորցած ձուկին անունն է Քաքսիսօ պիւսիս. Քաքսիսիօ կը նշանակէ էրկիմարդուն գերակայութիւնը. պիւսիսի աղնիւ մարտիկ մը որ իր կինը կը պաշտպանէ: Նօսիս որ խեցեմօրթին անունն է՝ կը նշանակէ երկարակեցութիւն և ոսկեայ ամուսնութիւն (50 տարուան):

Միջնորդը խնամով կը քննէ օրացոյցը և երջանկարեր որ մը կ'ընտրէ հարսնիքին համար: Նուէրներու երկար ցանկ մըն ալ կը պատրաստէ և նուէրները մէկտեղ առնելով կը տանի հարսին



տունը. Այն ատեն հարսնիքը կազդարարուի. և բարեկամներ ընծաներ կը բերեն. Դերձակուհիները շատ գործ կունենան ընելիք. հարսին հայրը ձեռք մը հագուստ իսկ չը գնէր իր աղջկանը համար. բայց պէտք է որ ամբողջովին, վերէն վար կահաւորէ փեսին տունը.

Մտածեցէք դուք այս բանին վրայ, դուք, փեսայուներ, հաշիւ պէտք չէ ընել այլ ևս թէ ինչպէս խնայողութիւն ընելու է տունը կահաւորելու համար և ոչ ալ կահաւորողներու հաշիւները մաքրելու համար մտմտալ. Այն բան կը հոգայ ճաբոնցի աներ պապան:

Եւ դուք աղջիկներ, չպիտի ուզէիք ճաբոնցի հարս մը ըլլալ:

Նոյն իսկ եթէ փեսան ընտրեն ձեզի համար սիրաշահին ձեզի համար և շատ ալ խօսք չը փնայ ձեզի ընելիք այս խղճորոյ մասին, հոգ չէ, որովհետեւ կունենաք դուք գեղեցիկ օժիտ մը, նոր կահաւորում տուն մը, և բնականաբար սէրն ալ կը յաջորդէ ասոնց. ուրիշն ասկէ աւելի ինչ կ'ուզէք:

Ա. ՍՈՆՏ

Թարգմ. Օ. Ն.

## ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒՆ ՆՈՒԷՐ

Կանխիկ վճարող բաժանորդները ամեն երեք ամիսը անգամ մը գրքոյկ մը կը ստանան իբր նուէր:

## Ծ Ի Ծ Ա Ղ

Անցած օր Տիկին Մ. . . իր էրկանը հետ կուր ի մը բռնուեցաւ որ երթալով վերջին աստիճան սաստկացաւ. Վեց տարեկան զաւակնին որ այս կուրին ներկայ էր, շուարած կը կենար:

Յանկարծ հայրը բարկութենէն բոլորովին փրփրած գոչեց:

— Կնիկ, հիմա թեւեւ բռնածիս պէս քեզ բէնճիրէն վար կը նետում, կտոր կտոր կըլլաս հա:

Տղան այս պառնալիքը լսելով մօրը ըսաւ.

— Մի վախնար մայրիկ, անցած օր մեր կատուն ալ պալքոնէն վար նետեց քի կտոր կտոր ընէ տէյի ամա՛ բան մը չկրցաւ ընել:

— օ —

Չափազանց խաղա՛մով մը սովորութիւն ըրած էր միշտ ձեռնացով խաղալ:

Օր մը երբ դարձեալ այնպէս թուղթ կը խաղար, հետաքրքիրներէն մին հարցուց:

— Միթէ ձեռքերդ կը մսի՞ն որ միշտ այսպէս ձեռնացով կը խաղաս:

— Ահ, ոչ պատասխանեց. լուսահոգի հայրս մեռած ատենը երգուընցուց զիս այլ ևս ու եւ խաղի թուղթի ձեռք չ'գպցունել, ուստի ըրած երգումիս հաւատարիմ կուզեմ գտնուիլ:

— օ —

Երկու նորապսակ ամուսնի:

— Սիրելի ամուսինս, արդեօք դու ալ շատերու նման ամուսնական կեանքէ շուտ մը պիտի ձանձրանաս:

— Ամենեւին սիրելի կինս, ամուսնական կեանքն այն աստիճան հաճելի է ինձ, որ եթէ Աստուած մի արասցէ, այսօր մեռնիս, վաղը նորէն կը կարգուիմ:

— օ —

Փողոցին մէջ.

— Սաթենիկ աղջիկս, ի՞նչ կը ցատկաւոր, շիտակ չի քալես:

— Տուտու, ցատկեմ նէ աղէկ խաղալ գիտէ կըսեն:

— Ատիկա նէ իսէ ըսենք. թեքդ ինչո՞ւ կախեր կերերցնես:

— Անիկա ալ մօտա է. էրի՛ մարդու քալումած քի պէս պիտի քալենք քի սէրսէմ է չըսեն:

— օ —



Բժիշկ մը ու Խմբագիր մը  
Խմբագիր մը՝ ճամբան բարեկամ բժիշկի մը  
հանդիպելով կ'ըսէ:

— Կ'աղաչեմ, դեղ մը, գիշերները երբեք  
քուն չ'ունիմ:

— Ահ, ատկէ գիւրիւն ի՞նչ կայ. կը պա-  
տասխանէ տօթթօւը. դրած յօդուածներդ կար-  
դա:

— 0 —

Մարտիկ աղա տունն մէջ ունեցածը չունե-  
ցածը մէկիկ մէկիկ ծախած էր. բարեկամ մը որ  
օրին մէկը անոր տունը գացած էր, հարցուց:

— Բայց Մարտիկ աղա, ունեցածդ չունե-  
ցածդ ո՛ւր կը դնես:

— Վրաս կը պահեմ, աղբար, վրաս կը պա-  
հեմ որ չը հիննայ:

— 0 —

Անգամ մը Բարիզի մէջ փողոցը այր եւ կին զի-  
րար կը սկսին ծեծել. ոստիկանները զանոնք ձերբակա-  
լելով պահականոց կը տանին: Անոնց մէկ բարեկամը որ  
պատահամբ անկէ կանցնէր, մինչեւ պահականոց կըն-  
կերանայ:

— Կուենին սկիզբէն տեսա՞ք, կը հարցնէ ոստի-  
կանապետը, նոյն բարեկամին:

— Այո՛, Պ, ոստիկանապետ, 2 տարի կայ:

— Հէ՛, երկու տարի մի՛:

— Այո՛, իրենց ամուսնութեան կնքահայրն եմ:

## ՅԵՄԱՊԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ:

Քամչաթքա

Հայ խմբագիր մը որ ամիսի մը չափ դա-  
յար ըրած էր, այս պատճառաւ իր ընտր բա-  
ժանորդներէն շահած մէյմէկ ֆրանքին հոմը  
բերանը մնալուն, կուզէ անոնցմէ կէս կէս ֆրանք  
եւ... քաշել. խոստանալով ըրած դադարը փո-  
խարինելու համար անոնց տալ թերթին մէջ  
արդէն իբր թերթոն հրատարակուած և տարի-  
ներէ ի վեր Ձարպհանէլեան գրատունը տէմիր-  
պաշ սպասող Հ. Ջոհեր անուն հիանալի քաղնոն  
եղիլը:

Բոժ. — Ո՛վ կը կուէ:

Պոսթըն

«Դիմակաւորներու հեղինակը Ձայն Հայ-  
րենեացի մէջ նամակ մը հրատարակելով, ջեր-  
մագին» կը շնորհաւորէ ու կը ջատագովէ միու-  
թիւնը այն հնչականներուն՝ զորս ասկէ առաջ  
իր «Դիմակաւորներուն միջոցաւ ա՛յնչափ նա-  
խատած, վարկաբեկ ու դիմակաւորիկ ըրած էր:

Կը հարցնէ իրեն թէ այս երկու գրու-  
թիւններէն որի՞ն հաւատալու է:

Բոժ. — Էյ պաւփօ՛, աղէկ ատենը գտաք  
հարցունելու, մարդուն մօրուքը բռնկել է, դուք  
ալ ելել, «կեցի՛ր, սա սիկառանիս վառենք»  
կ'ըսէք:

Քամչաթքա

Վաշխառուները բռնկեցին. չոյնա լեկկիկի  
պէս գլուխնին առգին անգին կը զարնեն կոր  
իրենց վրայ նոր դրուած 600ական ֆրանք տա-  
րեկտն բաթէնթէն ազատուելու համար:

Կըսեն թէ Ա. անգամ մալիւմ աղային լեզուն առ-  
նուեր է, որովհետեւ այդ 600 ֆրանքէն զատ՝  
ծխալսաճառութեան ու ախտէրութեան համարալ  
զատ բաթէնթ պիտի տայ, որոց ամենուն գու-  
մարը կը հասնի ծղեր 800 ֆրանքի:

Բոժ. — Իմ անկեղծ տիրութիւնս կը յայտ-  
նեմ մալիւմ աղայիս:

Մուսալլա

Սանդրալի սրահին մէջ հարսնիքի մը շնոր-  
հաւորական ընդունելութիւնք տեղի ունեցան,  
պարերը մեծ ոգեւորութեամբ և անընդհատ  
տեկցին մինչեւ ժամը հինգ. հրաւիրեալք պատ-  
ուասիրուկցան մէյմէկ զեհրայիլով և 36 տակաւ...  
ազաւ լեշնէի շուրով:

## ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր Մալիւմա.  
թը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէ-  
լէր վէ Բէսիմլի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ  
նէշր օլունան մէզքիւր քիթապըն պիւրինճի ճիւ-  
աի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սա-  
թըլմագտաւըր Ֆիյ 2 ֆրանք:



## ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ ալյցետումս, հասցէտումս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահալիզ, թատերական աշգեր, տումսակներ, դիրք և յայտարարութիւններ:

Գիները յոյժ գիւրամատչելի:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշդութեամբ և փութով կը կատարուին:

Ալյցետումս տպագրել տուողներուն նուէր կը տրուի «Ի՞նչպէս գործածելու է ալյցաքարտը» անուն հրահանգի գրքոյի մը:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՅ

— 0 —

## ԾԱԽՈՒԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան Իշխան — Պրանսահայ Բառարան դին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժաւորանաց համար 20 ֆրանք:

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ ուղւոյն 2 ոսկէս ֆր.

|                      |    |      |
|----------------------|----|------|
| Թիթուսներ (ստանաւոր) | 25 | անգ. |
| Հովատուն             | 25 | "    |
| Երասուածոր           | 20 | "    |

Թ. Գ. Հինուլեան — Տեւական և գործնական Բերականութիւն Պուլկարեքէն լեզուի 1 ֆր

Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր. Բաղդախաղ պատկեր 25 անգ.

Թատլաքեան Փիլիպպոսը հարսնէքը 60 անգ. Բարեկենդանի անկուտիւնները կատակախաղ 1 արար 50 անգ.

Մահմուդիյէթին մի քեաֆաթը, գովէտի պիւր բէրտէ, 50 անգ.

Գոգանճ գօծա եախօս Էնֆիլէճի, գօմէտի պիւր բէրտէ, 50 անգ.

Печатница «Взаимность» — Варна

ԱՆՈՒՇԱՒԱՆ

## ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

Կամ Աղջկան մը յիշատակարանը

Վէպ մը իրական կեանքէ

(Մամուլ տակ)

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ դանդաղ պատկերներ, հրատարակութեան յանձնում է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիւրութիւն ընծայուելու համար:

Բաժանեցինն է 1 ֆրանք, բոլորի ծախսը հրատարակին վրայ:

Տպագրութիւնը աւարտուելու գրեթէ կը յանձնուին բաժանորդաց:

Գոյանալիք հասցիներ տալով ինքեանք կը նուիրուին «Հայկական կարմիր խաչ» ընկերութեան:

Բաժանորդագրութեան համար գրիմել հետեւեալ հասցէին.

ՄՈՒՐԱՏ ԵՐԱՆՈՍԵԱՆ

(Պուլկարիա)

Վառնա

## ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Պրանսայի նշանաւոր վիպասաններէն

ՌԵՆԷ ՏԵ ԲՕՆԻԷ

հեղինակութիւնը եղող

## ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

անուն խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

Հինգերորդ եւ Վեցերորդ թերթերը

Ամեն դասակարգի գիւրամատչելի ըլլալու համար, գիրքը մատակարար 8ական երեսներէ բաղկացեալ, շաբաթը երկու թերթ պիտի հրատարակուի և իւրաքանչիւր 8ական երեսը պիտի ծախուի **5 սանթիմի:**

Ամբողջ 24-25 թերթեր պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժանորդագիր 1 մը. Ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20:

Վառնայէ դուրս, Պուլկարիայ համար երեք թերթ մէկ ծրարով կը զրկուին. իսկ արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով մէջ. փոսթի ծախքը հրատարակին վրայ է:

Փափաքողք պէտք է գրիմել հետեւեալ հասցէին.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ.Ս.Ռ.Ն.Ա.

Դրամի փոխուէն նամակադրում ալ կրնդունուի